

ՄԵՆՔ ՆԵՐՍԻՑ ԵՆՔ ՓՉԱՑԱԾ...

Posted on February 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Լեզուի պետական կոմիտեի նախագահ **պարոն Դաւիթ Գիւրջինեանին,**

Մի քանի թոպէ առաջ ստացայ կցուող ազդի լուսանկարը: Առաքող բարեկամս յոյժ վրդովուած էր, որ երկու իբրեւ թէ հայազգի երգիչներ Երեւանի սրտում իրենց տալիք համերգի ազդը տպել են ՄԻԱՅՆ անգլերէն: Նշոյլ իսկ չկայ ՀՀ պետական ՄԻԱԿ լեզուից՝ հայերէնից:

Տեղեկացնելով այս մասին, պահանջում եմ, որ այս երկոտանի արարածների եւ նրանց ազդը տարածողների նկատմամբ Լեզուի պետական կոմիտեն ԱՆՅԱՊԱՂ քայլերի դիմի, ընդհուպ համերգի պարտադիր չեղարկումը եւ ՀՀ լեզուական օրէնսդրութիւնն ու մեր ազգային արժանապատուութիւնը ոտնակոխողների նկատմամբ խստագոյն ուրիշ պատիժների կիրառումը:

Գեորգ Եազըճեան

Երեւան, 29 յունուար 2023, գիշեր

ՅԳ. Չգուշացնում եմ, որ այս խայտառակութիւնները շարունակուելու դէպքում համախոհների հետ դիմելու ենք համապատասխան ինքնակամ քայլերի՝ ամբողջ պատասխանատուութիւնը բեռնելով հարկատուներին հաշուին սնուող, բայց ԱՆԳՈՐԾՈՒՆԵԱՅ ՀՀ պետական մարմիններին: Իսկ եթէ մեր նկատմամբ ինչ-ինչ պատժիչ քայլերի դիմուի՝ դրանց եւս պատրաստ ենք: ԹՈՂ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՄՕԹՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԻ, ՈՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ՆՐԱՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻՆ ՀԱԼԱԾՈՒՄ ԵՆ ԵՒ ՊԱՏԺՈՒՄ:

Comments



Sossy Neredian – 2023-02-10 03:50:28

Յարգելի Պր. Եազըճեան, Շատ իրաւունք ունիք զայռանալու վերելը յիշած ամօթալի պատահարին համար: Սակայն ինչու՞ զարմանանք քանի որ Սովետական շրջանին Ռուսերէն խօսիլը զարգացած ըլլալու նշան էր իսկ հիմա ալ Անգլերէնը : Հայ ժողովուրդը միայն իր երգերուն կամ դատարկ ճառախօսութիւններուն մէջ է որ կը հպարտանայ իր մայրենիով. հազիւ թէ գաղթէ Հայաստանէն մի քանի ամիս ետք արդէն "մոռանալով" իր լեզուն կոտրած-թափած Անգլերէնով խօսիլ կ'սկսի: Ալ չխօսիմ Արեւելահայերէնին աղաւաղուած ուղղագրութեան մասին: